ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԼԽԱՎՈՐ ԴԱՏԱԽԱԶ

ՀՐԱՄԱՆ № 10

«09» 02 2022 թ. ք. Երևան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԼԽԱՎՈՐ ԴԱՏԱԽԱԶԻ 22.01.2021Թ. N 2 ՀՐԱՄԱՆՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Մինչդատական վարույթում քննվող քրեական գործերի քննության ժամկետների երկարաձգման պատճառները պարզելու և դրանց վերացմանն ուղղված անհրաժեշտ կառուցակարգեր սահմանելու նպատակով, ղեկավարվելով «Դատախազության մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի 2-րդ մասի 7-րդ կետով, 30-րդ հոդվածի 3-րդ մասով, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 34-րդ հոդվածով՝

Հրամայում եմ՝

1. Հաստատել Հաստատել Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազի 22.01.2021թ.՝ «Քրեական գործերի ընթացքի վերաբերյալ տեղեկություններ ներկայացնելու ու Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազի 25.12.2007թ. N 20/3 ցուցումը և ՀՀ դատախազության կոլեգիայի 06.03.2020թ. նիստի որոշման 3-րդ կետի 4-րդ ենթակետը և 4-րդ կետն ուժը կորցրած ճանաչելու մասին» N 2 հրամանի 2-րդ կետի 1-ին ենթակետով և 3-րդ կետի 1-ին ենթակետով հաստատված N 3-րդ և N 4-րդ հավելվածները՝ համաձայն հավելված N 1-ի և N 2-ի (կցվում են):

2. Սույն հրամանն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

3. Սույն հրամանի կատարման վերահսկողությունն իրականացնում է Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազը:

4. Սույն հրամանի պատճենն ուղարկել Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազի տեղակալներին, Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազության վարչությունների պետերին, ավագ դատախազներին և դատախազին,

Հայաստանի Հանրապետության զինվորական կենտրոնական դատախազության բաժինների պետերին ու ավագ դատախազներին, մարզերի, Երևան քաղաքի, Երևան քաղաքի վարչական շրջանների և կայազորների զինվորական դատախազներին, Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազի խորհրդականներին ու օգնականներին, Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազի տեղակալների օգնականներին, Հայաստանի Հանրապետության դատախազության գլխավոր քարտուղարին:

Ա.ԴԱՎԹՅԱՆ

Հավելված N 1

ՀՀ գլխավոր դատախազի
2022թ. փետրվարի «9»
N 10 հրամանի

«Հավելված 3

ՀՀ գլխավոր դատախազի
2021թ. հունվարի «22»
N 2 հրամանի

ՏԵՂԵԿԱՆՔ

6 ամսից ավելի ժամանակով մինչդատական վարույթում քննվող քրեական գործերի վերաբերյալ

(հաշվետու ամիսը)

(կառուցվածքային ստորաբաժանման անվանումը)

Հ/հ	քրեական գործի համարը, հարուցման ամսաթիվը,	մեղադրյալի ա. ա. հ., ՀՀ քր. օր.-ի հոդվածը (որով մեղադրանք է առաջադրվել կամ մեղադրյալ է ներգրավվել) խափանման միջոցը	քրեական հետապնդման մարմին	հսկող/ վերահսկող դատախազը	արարքի համառոտ նկարագրություն	ընթացքը	ժամկետի երկարաձգման պատճառները	վարչության պետի մոտ անցկացված օպերատիվ խորհրդակցության արձանագրության համարը և ամսաթիվը
1	2	3	4	5	6	7	8	9

»

Հավելված N 2

ՀՀ գլխավոր դատախազի
2022թ. փետրվարի «9»
N 10 հրամանի

«Հավելված 4

ՀՀ գլխավոր դատախազի
2021թ. հունվարի «22»
N 2 հրամանի

Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք

8 ամսից ավելի ժամանակով մինչդատական վարույթում քննվող քրեական գործերի վերաբերյալ

(հաշվետու ամիսը)

(կառուցվածքային ստորաբաժանման անվանումը)

Հ/հ	քրեական գործի համարը, հարուցման ամսաթիվը,	մեղադրյալի ա. ա. հ., ՀՀ քր. օր.-ի հոդվածը (որով մեղադրանք է առաջադրվել կամ մեղադրյալ է ներգրավվել) խափանման միջոցը	քրեական հետապնդման մարմին	հսկող/ վերահսկող դատախազը	արարքի համառոտ նկարագրություն	ընթացքը	ժամկետի երկարաձգման պատճառները	վարչության պետի և ՀՀ գլխավոր դատախազի տեղակալի մոտ անցկացված օպերատիվ խորհրդակցության արձանագրության համարը և ամսաթիվը
1	2	3	4	5	6	7	8	9

»